

**ԵՊՀ-ի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2017 թվականի
հոկտեմբերի 26-ին կայացած Գիտական Խորհրդի N2 նիստի**

Նախագահ – Մ.Ա. Գրիգորյան

Քարտուղար – Ե.Ս. Մանուկյան

Ներկա էին՝ 38 անդամներից 26-ը (ցուցակը կցվում է)

Դեկան Մ.Ա. Գրիգորյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օրակարգ.

1. Պրոֆեսորադասախոսական կազմի պատրաստվածության մակարդակը ամբիոններում
/զեկ. փոխդեկան Վ.Պ. Վարդանյան/
2. «Դասախոսն ուսանողի աչքերով» սոցիոլոգիական հարցման արդյունքների քննարկումը
/զեկ. փոխդեկան Վ.Պ. Վարդանյան/
3. Ուսանողների հաճախումները և աշխատանքային կարգապահությունը ֆակուլտետում
/զեկ. փոխդեկան Ա.Թ. Գրիգորյան/
4. Աշխ. և երկրաբանության ֆակուլտետի բակալավրի կրթական ծրագրերի վերամշակման
հայտերի քննարկում և հաստատում /զեկ. աշխատանքային խմբերի ղեկավարներ/
5. Գիտական հաղորդում
6. Ընթացիկ հարցեր

1. ԼՄԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի փոխդեկան Վ. Վարդանյանի հաղորդումը ամբիոններում պրոֆեսորադասախոսական կազմի պատրաստվածության մակարդակի վերաբերյալ: Վ. Վարդանյանն իր խոսքում առաջանահերթությունը տվեց դասախոսական կազմի վերապատրաստմանը և ներկայացրեց ներբուհական վարչության կողմից կազմակերպած վերապատրաստման գործընթացը, որի ընթացքում բոլոր ամբիոնների մինչև 60 տարեկան դասախոսները 2016-2021 ժամանահամիջոցում պետք է հավաքեն նվազագույնը 30, իսկ ցանկության դեպքում՝ մինչև 50 կրեդիտ:

ՈՐՈՇՅԻՆ. ընդունել ի գիտություն

2. ԼՍԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի փոխդեկան Վ.Վարդանյանի հաղորդումը **«Ռասախոսն ուսանողի աչքերով»** սոցիոլոգիական հարցման արդյունքների վերաբերյալ: Վ.Վարդանյանը մանրամասնորեն ներկայացրեց հարցման տվյալներն ըստ ամբիոնների և ըստ կիսամյակների: Հարցման մասնակցել են առկա ուսուցման ուսանողների 79% և հեռակա ուսուցման ուսանողների 72%: Ըստ այդ տվյալների ֆակուլտետն ունի բավականին բարձր ցուցանիշ: Շատ գովելի է գործընթացի առցանց լինելու փաստը, ինչը թույլ տվեց նույնիսկ պրակտիկա գտնվող ուսանողներին մասնակցելու հարցմանը: Վ.Վարդանյանը նույնպես ներկայացրեց ուսանողների գրառումները դասախոսների վերաբերյալ: Առավել հաճախ էին կրկնվում ուսանողների ցանկություններն ու առաջարկությունները պրակտիկայի պայմանների վերաբերյալ:

ՀԱՐՑԵՐ ՏՎԵՑԻՆ. Մ.Գ.Մանասյանը հարցրեց եզրահանգումների վերաբերյալ, երբ առկա է սոց. հարցման արդյունքում գնահատականների միջև տարբերություն՝ 5 և 4,6:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. պրոֆ. Մ. Մանասյանն իր խոսքում նշեց, որ “տուրիզմ”-ին վերաբերող առարկաները դասավանդելիս անձնական կարծիքներն ու տպավորություններով կիսվել ուսանողների հետ ավելի ընկալելի է ուսանողի համար, քան ուսանողին տեսական և գրականության մեջ ներկայացրած նյութի վերարտադրելը և ներկայացնելը: - Ժամանակին ասել եմ և հիմա ավելի քան համոզված եմ, որ այս սոց.հարցումները սոցիոլոգիա գիտության հետ կապ չունեն: Սոց. գնահատումը կախված է ճիշտ մոտիվացիոն խմբերի ընտրության հետ: միայն այդ դեպքում այս գնահատականներն ավելի օբյեկտիվ կլինեն,- ասաց Մ.Մանասյանը,-Ընդամենը դիպում ստանալու համար ընդունված ուսանողների գնահատականները միշտ լինելու են հոգուտ հեշտ գնահատական դնող դասախոսների: Մ.Մանասյանն առաջարկեց հարցման նոր կարգ, ըստ որի հարկավոր է ուսանողներին դասակարգել ըստ տիպերի և հարցումներն անցկացնել ըստ առանձին խմբերի՝ գիտելիք ստանալու նպատակով եկած ուսանողների խումբ և միայն դիպում ստանալու համար եկած ուսանողների խումբ: Նման արդյունքներն ու վերլուծությունները ավելի օբյեկտիվ կլինեն,- ասաց Մ.մանասյանը:

Ս.Սուվարյանն իր խոսքում նշեց, որ հարցում կատարելը բարդ խնդիր է: Սուվարյանը նշեց բոլորին հայտնի փաստը, որ հարցումների մեջ կատարյալ կերպով և աշխարհում կա վիճակագրություն, ըստ որի հարցումների միջին սուբյեկտիվիզմը կազմում է 20%: Եթե մարդիկ գնահատում են նույն կերպ ապա նույն սխալ “կերպը” տարածվում է նաև բոլորի վրա, ի վերջո մենք ստանում ենք որոշակի պատկեր, որտեղ երևում է տարանջատում. արդյունքում ստացվում է, որ դրված խնդիրը լուծված է, ինչը սակայն բացարձակ չէ,-ասաց Ս.Սուվարյանը: Շարունակելով Ս.Սուվարյանն ասաց, որ այս հարցումներն արվում են վաղուց և կա միտում և կան մարդիկ, ովքեր ավանդաբար ստանում են ցածր գնահատականներ: - Այո՛, սուբյեկտիվիզմ կա, ասաց Սուվարյանը,- սակայն վերջինս ստեղծվում է օբյեկտիվ պայմաններից ելնելով, իսկ օբյեկտիվությունը գնահատման ենթակա չէ: Մա մեր կատարած աշխատանքի հետադարձ կապն է և անձնավորելու կարիք չկա:

Մ.Գրիգորյանն ասաց, որ սոց.հարցման ձևով դասախոսին գնահատելու կարգը վաղուց է դրված ԵՊՀ-ում անկախ որևէ ցանկությունից, դա ուսանողի իրավունքն է: Ուսանողների թողած գրառումներն ու արտահայտած մտքերը հիմնականում համընկնում են ֆակուլտետի աշխատողների ճնշող մասի տպավորության հետ: Ուսանողն ուզում է իրեն կրթող մարդուն տեսնել իդեալական, ումից կկարողանա լավ և դրական օրինակներ վերցնել: Գնահատականը ոչ միայն կարծիք է դասախոսի գիտելիքի մասին, այլև կարծիք է մարդկային կերպարի և համալսարանում դասախոս լինել չլինելու մասին: - Սոց.հարցումները հարկավոր է ոչ թե քննադատել, այլ եզրահանգումներ և հետևություններ կատարել, միայն այդ դեպքում կունենանք մրցունակ պրոֆեսորադասախոսական անձնակազմ: Կողմնակի ուժերի կողմից միտումնավոր, ուսանողների վրա բացասական կարծիք ձևավորելը տևական ժամանակ չի կարող լինել, ինչը կարտացոլվի գնահատականների պատկերում, - ասաց Մ.Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն

3. ԼՄԵՑԻՆ. Փոխդեկան Ա.Թ.Գրիգորյանի հաղորդումը ֆակուլտետում ուսանողների հաճախումների և աշխատանքային կարգապահության վերաբերյալ: Նա նշեց,

որ նախկինում ուսանողը 2 միավոր ստանում էր որպես հաճախումների արդյունք, շատ ֆակուլտետների կարծիքների հիմա վրա այս տարի հաճախումների այդ 2 միավորը հանվել է, ինչը բնականաբար բացասաբար ազդել է ուսանողների հաճախելիության վրա: Ավագները հանձնարարություն են ստացել և հաճախումների քանակը դուրս կբերվի մատյաններից և շատ բացակա ունեցող ուսանողները գրավոր կամ բանավոր կզգուշացվեն (ըստ բացակաների քանակի) հետագա խնդիրներից խուսափելու համար: - “աշխարհագրություն” մասնագիտության 2րդ կուրսի ուսանողները չեն հաճախում ֆիզկուլտուրայի, “երկրաբանություն” մասնագիտության 1-ին կուրսի որոշ ուսանողներ մշտական բացակայություններ “համակարգչից օգտվելու հմտություններ” դասաժամերից, ինչին հետևելու արդյունքում ստանում ենք դրական արդյունք,- ասաց Ա.Գրիգորյանը: Երբեմն լինում են բողոքներ լեզվական դասընթացներից: Ա.Գրիգորյանը խոսեց նաև **աշխատանքային կարգապահության մասին** և ասաց, որ մի քանի անգամ ստուգումներից հետո նկատվել է առավոտյան ժամերին և 15.00-ից հետո շատ լաբորանտներ բացակայություններ: Դասախոսների հաճախումներում հիմնականում խնդիրներ չեն դիտվել բացառությամբ եզակի հարգելի դեպքերի:

ՀԱՐՑԵՐ ՏՎԵՑԻՆ. Ս.Հ.Հայրոյանը փորձեց հասկանալ ուսանողների հաճախելիության 2 միավոր հանելու նպատակները:

Ս.Ռ.Սուվարյան – Արդյո՞ք որևէ որոշում կա ուսանողների բացակայությունների դեմ պայքարելու մեթոդների վերաբերյալ:

Ս.Գ.Մանասյան – Արդյո՞ք կատարվել է ուսանողների հաճախելիության վիճակագրություն ըստ ամբիոնների և արդյո՞ք կատարվել է որևէ վերլուծություն: Նկատվել է արդյո՞ք կապ դասախոսի բարձր գնահատականի և վերջինիս դասընթացներին ցածր հաճախելիության միջև:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Մ.Ա.Գրիգորյանն իր խոսքում նշեց, որ կան շատ բացակայող ուսանողներ, ովքեր ուզում են սովորել, նրանք բացակայում են ոչ թե չարամտորեն այլ՝ աշխատանքի բերումով և լուծում են հացի խնդիր ու հոգում ընտանիքի հոգսերը: Կան դեպքեր, երբ բացակայությունները կախված են հենց դասախոսներից, ովքեր անհետաքրքիր են ուսանողին, այստեղ անելիք ունենք ուսանողի մոտ առարկայի բնագավառում հետաքրքրություն առաջացնելու

հարցում: Մ.Գրիգորյանն ասաց, որ աշխատանքային կարգապահությունը կապում է ամբիոնի վարիչների հետ: Անհարգելի բացակայելու, լսարան ուշ մտնելու, շուտ դուրս գալու հարցերի լուծումները առաջին հերթի ամբիոնի վարիչի պարտականությունն է: - Դասախոսի բացակայությունը պետք է լուծվի ամբիոնի վարիչի, դեկանատի և ուս.վարչության մակարդակով,-ասաց Մ.Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն:

4. ԼՍԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի բակալավրի կրթական ծրագրերի վերամշակման հայտերի քննարկման և հաստատման հարցը: Նիստին ներկայացվել էր 4 կրթական ծրագրի վերամշակման հայտ՝ 1.Աշխարհագրություն, 2. քարտեզագրություն և կադաստրային գործ, 3. Երկրաբանություն, 4 Սերվիս: Վրջիններս հաստատումից հետո ենթարկվելու են վերամշակման: Հետագայում վերամշակված հայտերը կներկայացվեն ռեկտորատի կողմից ստեղծված որակի ապահովման հանձնաժողովին հաստատման:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել հայտերը և ներկայացնել որակի ապահովման հանձնաժողովի հաստատմանը:

5.1 ԼՍԵՑԻՆ. Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի հեռակա ասպիրանտ Արտակ Սարգսի Փիլոյանի «ՀՀ ռելիեֆի մորֆոմետրիական վերլուծություն ԱՏՀ տեխնոլոգիաների կիրառմամբ» (ԻԴ.03.01 Աշխարհագրություն) գիտական թեմայի վերնագրի մեջ փոփոխություն կատարելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պ.Գ.Դավթյանը իր խոսքում նշեց հետազոտության արդյունքների մասին և քանի որ հետազոտության արդյունքում ստացվել են նոր տվյալներ առաջարկեց աշխատանքի վերնագիրում կատարել որոշակի փոփոխություններ և հաստատել «Գեոմորֆոմետրիական ցուցանիշների հիման վրա ռելիեֆի շրջանացում և շրջանաձև կառուցվածքների տարանջատում Հայաստանի Հանրապետությունում՝ ԱՏՀ մեթոդների կիրառմամբ» վերնագրով:

ՈՐՈՇԵՑԻՆ. Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի հեռակա ասպիրանտ Արտակ Սարգսի Փիլոյանի գիտական թեման հաստատել «Գեոմորֆոմետրիական ցուցանիշների հիման վրա ռելիեֆի շրջանացում և շրջանաձև կառուցվածքների տարանջատում Հայաստանի Հանրապետությունում՝ ԱՏՀ մեթոդների կիրառմամբ» (ԻԴ.03.01 Աշխարհագրություն) վերնագրով:

5.2 ԼՄԵՑԻՆ. Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի հեռակա ասպիրանտ Արտակ Սարգսի Փիլոյանի գիտական հաղորդումը «Գեոմորֆոմետրիական ցուցանիշների հիման վրա ռելիեֆի շրջանացում և շրջանաձև կառուցվածքների տարանջատում Հայաստանի Հանրապետությունում՝ ԱՏՀ մեթոդների կիրառմամբ» (ԻԴ.03.01-Աշխարհագրություն) թեմայի վերաբերյալ:

ՀԱՐՑԵՐ ՏՎԵՑԻՆ.

պրոֆ. Վ.Պ.Վարդանյանը, Պ.Գ.Դավթյանը, Հ.Ա.Բաբայանը

Բոլոր հարցերին Ա.Փիլոյանը տվեց իր հանգամանալից պարզաբանումներ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

դոց. Ա.Թ.Գրիգորյան – Ա.Փիլոյանը ներկայացրած աշխատանքը բավականին տպավորիչ, սակայն շարադրանքի մեջ կան որոշակի թերություններ: Խնդիրը դրված էր, այն լուծելու մոտեցումները արդիական: Խոսքի ավարտին առաջարկեց երաշխավորել հրապարակային պաշտպանության:

դոց.Ս.Ռ.Սուվարյան – Թեման դրված է, խնդիրներն առաջադրված: Ելույթում Ս.Սուվարյանն առաջարկեց կոնկրետացնել նյութերի կիրառման ոլորտը:

պրոֆ.Թ.Գ.Վարդանյանն ասաց, որ աշխատանքը բավականին բարդ էր և տարողունակ: Վ.Վարդանյանն առաջարկեց աշխատանքը ներկայացնել 4 գլխով՝ միավորելով 4-րդ և 5-րդ գլուխները: Խոսքի ավարտին Վ.Վարդանյանն ասաց, որ աշխատանքը բավարարում է ԲՈՆ-ի կողմից ներկայացված պահանջներին և առաջարկեց երաշխավորել հրապարակային պաշտպանության:

ՈՐՈՇԵՑԻՆ. Երաշխավորել Արտակ Սարգսի Փիլոյանի ներկայացրած աշխատանքը հրապարակային պաշտպանության:

6. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

6.1 ԼՄԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Օգտակար հանաձոնների հանքավայրերի որոնման և հետախուզման ամբիոնի վարիչ Ռ.Ս.Սովսեյանի հաղորդումը Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Օգտակար հանաձոնների հանքավայրերի որոնման և հետախուզման ամբիոնի 325 կաբինետն անվանակոչելու վերաբերյալ:

ԱՌԱՋԱՐԿՎԵՑ. «Ձոնված ազատամարտիկ Մհեր Ջուլիաճյանի անվան օգտակար հանաձոնների հանքավայրերի որոնման և հետախուզման» կաբինետը վերանվանել «Ձոնված ազատամարտիկ Մհեր Ջուլիաճյանի անվան օգտակար հանաձոնների հանքավայրերի հետախուզման և մոդելավորման տեղեկատվական տեխնոլոգիաների ուսումնական լաբորատորիա» անվանումով:

ՈՐՈՇԵՑԻՆ. Օգտակար հանաձոնների հանքավայրերի որոնման և հետախուզման ամբիոնի 325 կաբինետն անվանել «Ձոնված ազատամարտիկ Մհեր Ջուլիաճյանի անվան օգտակար հանաձոնների հանքավայրերի հետախուզման և մոդելավորման տեղեկատվական տեխնոլոգիաների ուսումնական լաբորատորիա»:

6.2 ԼՄԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի <Սոցիալ-տնտեսական աշխարհագրության> ամբիոնի 3-րդ տարվա ասպիրանտ Գորիկ Ավետիսյանի ատենախոսության թեմայի վերնագրում խմբագրական փոփոխություններ կատարելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Ամբիոնի վարիչ Ա.Պոտոսյանը նշեց, որ Գ.Ավետիսյանի ղեկավար Հ.Սայադյանը ամբիոնի նիստին ներկայացրել է “Անտառային գեոհամակարգերի ծառայությունների գնահատումը և մոդելավորումը ԱՏՀ միջոցով (Տավուշի մարզի օրինակով)” վերնագրում փոփոխություն կատարելու հիմնավորումը, ըստ որի թեման հաստատել “Անտառային գեոհամակարգերի ծառայությունների գնահատումը և մոդելավորումը (Տավուշի մարզի օրինակով)” վերնագրով, քանի որ թեմայում կատարվելու են ինչպես ԱՏՀ այնպես էլ մոդելավորման այլ մեթոդներ և “ԱՏՀ”-ի միջոցով սահմանափակել ուսումնասիրության շրջանակներն անիմաստ կդարձնի աշխատանքում այլ մեթոդների կիրառումը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Գ.Ավետիսյանի ատենախոսական աշխատանքի թեման հաստատել “Անտառային գեոհամակարգերի ծառայությունների գնահատումը և մոդելավորումը (Տավուշի մարզի օրինակով)” վերնագրով:

6.3 ԼՄԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի <Սոցիալ-տնտեսական աշխարհագրության> ամբիոնի կողմից կազմակերպած պրոֆ.Թադևոս Խաչատուրի Հակոբյանի ծննդյան 100 ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի (“Հայաստանի Հանրապետության և Մերձավոր Արտասահմանի երկրների տնտեսության զարգացման և տեղաբաշխման ժամանակակից հիմնախնդիրները” վերնագրով) գիտական հոդվածների ժողովածուն հրատարակության երաշխավորելու հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ. “Հայաստանի Հանրապետության և Մերձավոր Արտասահմանի երկրների տնտեսության զարգացման և տեղաբաշխման ժամանակակից հիմնախնդիրները” վերնագրով գիտական հոդվածների ժողովածուն երաշխավորելու հրատարակության:

6.4 ԼՄԵՑԻՆ. Ա.Հ.Պոտոսյանի հաղորդումը Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի թիվ 427 լսարանը սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի նախկին վարիչ, աշխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Լեմվել Հակոբի Վալեսյանի անվան “Ատլասային քարտեզագրության լաբորատորիա” անվանակոչելու վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ. թիվ 427 լսարանը անվանակոչել սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի նախկին վարիչ, աշխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Լեմվել Հակոբի Վալեսյանի անվան “Ատլասային քարտեզագրության լաբորատորիա”:

6.5 ԼՄԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի <Մերվիսի> ամբիոնի մագիստրատուրայի բաժնի 2017թ շրջանավարտ Օվսաննա Արտակի Գաբրիելյանի ասպիրանտուրայի հեռակա բաժին դիմելու հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով Օ.Գաբրիելյանի ուսման ընթացքում ցուցաբերած առաջադիմությունը և անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունը՝ Երաշխավորել Օվսաննա Արտակի Գաբրիելյանի թեկնածությունը հեռակա բաժնի ասպիրանտուրա դիմելու վերաբերյալ:

Օրակարգից դուրս հարց ներկայացնելու խնդրանքով դիմեց սոցիալ-տնտեսական ամբիոնի պրոֆեսոր Մ.Գ.Մանասյանը

6.6 ԼՄԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի <Սոցիալ տնտեսական աշխարհագրության> ամբիոնի պրոֆեսոր Մ.Մանասյանի կողմից ներկայացված առանց ֆակուլտետի գիտ.խորհրդի երաշխավորության, սակայն սեփական նախաձեռնությամբ արդեն տպագրված “Սոցիալ-տնտեսական աշխարհագրություն” վերնագրով ուսումնամեթոդական ձեռնարկի վերաբերյալ երաշխավորություն ստանալու հարցը:

Մ.Մանասյանի անհանդուրժող և դիմացինին լսել չկարողանալու, երկխոսության չգնալու պատճառով երկար և բուռն ու անհանդուրժող բանավեճի արդյունքում Գիտ.խորհրդի նախագահ Մ.Գրիգորյանն առաջարկեց քվեարկել և Մ.Մանասյանի դրված հարցը հանել քննարկումից:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հարցը հանել քննարկումից:

Մ.Գրիգորյանը դատապարտեց Մ.Մանասյանի նման ցինիկ, անհանդուրժող և խորհրդի աշխատանքը յուրաքանչյուր նիստին խափանելու և խաթարելու դեպքերի վարքագիծը և առաջարկեց ռեկտորատ զեկուցագիր ներկայացնել իր անձնական հարցերի պատճառով լարված և անառողջ մթնոլորտ առաջացնելու փաստի վերաբերյալ:

Առաջարկի վերաբերյալ բաց քվեարկությամբ խորհրդի բոլոր անդամները միաձայն դատապարտեցին և անընդունելի համարեցին նման վարքագիծը:

Մ.Գրիգորյանն առաջարկեց ամբիոնում քննարկել Մանասյանի նման վարքագիծը և վերանայել գիտ խորհրդի կազմում Մ.Գ.Մանասյանի գտնվելու հարցը:

Խորհրդի նախագահ

Մ.Ա.Գրիգորյան

Խորհրդի քարտուղար

Ե.Ս.Մանուկյան